



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 25 — ՇԱՀԱՐԱՊԵՏ — 17 ՓԵՏՐՈՒԱՐ 1907

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԽԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆԻ
Տարեկան 50 Ղրշ.	Տարեկան 54 Ղրշ.	Տարեկան 42 Ֆր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

Զ Ե Ն Ի Թ

Իր ամէն մասանց մէջ կատարելապէս խնամուած միակ ժամացոյցը զոր կարելի ըլլայ յանձնարարել և երաշխաւորել այն բացարձակ ճշտութեան համար՝ որ իր յատկանիշն է :

ՄԵՍ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՉ 1900.

ԱՐՏԱԳՈՑ ՄՐՑՄԱՆ ՄԻՂԱՆ 1906,

Հանդերձ Ժիւռիի անդամակցութեամբ.

Թուրքիոյ և բովանդակ Արեւելքի համար միակ ներկայացուցիչը

Գ. ՍԱՐԳԻՍՕՑ Ե Ի ԸՆԿ

Մեծ մթերանոց ամէն տեսակ ժամացոյցներու, շղթաներու և գոհարեղէններու.

Կ. Պոլիս, Պաղչե-գարու, Օռօզի-Պաֆ (Կօմեր-եֆէնի) վաճառասան դիւան Թիւ 16,


ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԻՆ ԱՌԻՄԵՆԱՆ

(Տ. Ամսաւորան) شرکت صتیبه مطبعی — باب عالی جاده سنده نومی : ۵۵

ՏՊԱԳՐՈՒԹ ԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճաշքահի Թիւ 52

Հատը 40 փարա



Ձեռնի, ոսկի ու ոսկի եւ ձեռնի
 Լիանգամայն մեքենաներ
 կը գտնուին

ՇԱՀԱՍԹԱՆԿԱՆ
 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ

Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ,
 բայց էական կէտն է՝ լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
 մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
 ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
 եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԼԱՅԸ ՓԱՆԱՏԱՆ

THE SINGER

[MANUFACTURING COMPANY]



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կառարն լագործուածը,
 հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

- | | |
|---------------|--|
| ԲԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ . |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը . |
| | (2. Դարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՏԱՐ | Չարչը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնագիտեր զաւտուներու բոլոր ֆաղափներու մեջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզօղլուի տունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 25

ՇԱՐԱԹ

17 ՓԵՏՐՈՒԱՐ 1907

ԻՆՉՈՒ ԱՄՕԹԵՆՓ

Անցեալները բարեկամ մը մատնա-
նըշելով թէ՛ մեր բարեգործական հաս-
տատութիւնները ժամանակէ մը ի վեր
աւելի նպաստաւորուած են հանրային
գթութեան տեսակէտով, կը հարցնէր
թէ ի՞նչ է պատճառը, նշանակուած
այս պարագան եթէ մեր ընդհանուր
բարեգործական հաստատութիւններուն
համար մի և նոյնն ըլլար անխտիր,
թերեւս անել կացութեան մը մատ-
նուէի, բայց որովհետեւ, գոյազգա-
բար, մէկ երկու հաստատութիւններ
են միայն այդ բաղդին արժանացած,
ըսի իրեն թէ՛ գաղտնիքը ռեփումն է
պարզապէս, այսինքն թէ հինին բաղ-
դատմամբ աւելի՛ շատ օգտուածները
անո՞նք են միայն, որոնք իրենց ստա-
ցած նուէրները օրը օրին հրատարակել

տալու դիրութիւնը կը վայելեն. ու
հանրութիւնը, ստէպ անհրաժեշտօրէն
պէտք ունեցողին չէ՛ որ կուտայ, այլ
անոր որ պիտի ծանուցանէ իր նուէրը
ի լուր աշխարհի :

Արդարեւ, շատոնց անցած է այն
ժամանակը, որ ատեն մէկ ձեռքով
տրուածին միւս ձեռքին իմանալը ա-
մօթ կը համարուէր. եթէ այդ հին սո-
վորութիւնը դրժածութեան մէջ ըլ-
լար ներկայիս մէջ, հաւատացէք որ
շատ նիհար պիտի ըլլային նուիրատու-
ութիւնները իրենց քանակին ու որա-
կին տեսակէտով :

Ձեռք կրնար ուրանալ թէ ամէն
անհատ, ո՛ր համայնքին որ ալ պատ-
կանի, ի՞նչ աստիճանի մէջ որ ալ
գտնուի, պարտաւոր է, իբր մարդ :

իր կարողութեան չափով օգնել՝ իր դրկիցին, իր թաղեցիին և կամ իր համայնքին մի ու է բարեգործական հաստատութեան. պարտաւոր է իր ունեցածէն բաժին մը հանել անոր՝ որ չունի, կամ անոր՝ որ այդ չունեցողները խնամելու հաստատուած է. և սակայն շատ քիչեր կան այսօր իրապէս այդ պարտականութեան ձայնին անսացողներ, մնացած մեծ մասը պարզապէս ցոյցի, եւի դոհացումին համար է որ կը մղուի նուիրել, այդ մղումին մէջ փնտռելով իր շատ ու քիչ փառասիրութեան գոհացումը:

Ասիկա ապացուցանելու համար շատ հեռուները երթալու պէտք չկայ. ամէն մարդ իր մօտիկը, իր թաղին մէջ կրնայ գտնել մեծ ու պղտիկ փառասէրներ մէկէ շա՛տ աւելի թիւով:

Ծանօթ բարեսէրի համբաւ ունեցող բազմահարուստ վաճառականի մը դիմում եղած էր օր մը մասնակցելու իր թաղին աղքատիկ վարժարանին գրասեղաններուն նորոգութեան գործին. այդ համբաւաւոր մեծատունը սակայն, գործերու անյաշողութեան վրայ երկար բարակ երեմիականէ մը վերջ, մերժած էր դէթ այրի կնոջ լուման նուիրել. եկու տես որ այդ միեւնոյն վաճառականին համար հաղիւ ամիս մը ետքը թերթերը կը ծանուցանէին թէ՛ իր ծանօթ բարեսիրութեամբ (•) 20 ի չափ աղքատիկ տղայոց հազուստ շինել կուտար ուրիշ թաղի մը մէջ ուր փոխադրուած էր այդ միջոցին. ինչո՞ւ ամօթենք սակայն ասիկա, մարդը ինչո՞ւ չուզէր փայլիլ, ինչո՞ւ չուզէր երեւիլ քիչ մըն ալ իր նոր գացած թաղին մէջ:

Այսօր մասնաւոր դիմումներու վրայ

եղած նուէրներու քանակը շատ քիչ է բաղդադամաբ թերթերու միջոցաւ ծանուցուած նուիրատուութիւններուն, և պէտք չէ զարմանալ երբ այդ նուիրատուներու ցանկին մէջ տեսնուին երբեմն անանկ անուններ որոնց բառարաններուն մէջ իրենց նմանին օգնելու մարդկային պարտականութիւնը իսպառ զոյւթիւն չունենայ. այս կարգէն չէ՞ անցեալ շարժուման Մանգոլմէին մէջի Գում-գարուի Դրաի ժամկույն նուէրը որ պատշաճ ափերիմ մը կը չահէր:

Արդ, քանի որ թերթերու այս ծանուցումը, հրապարակային այս ցուցադրումն է միակ պայմանը նուիրատուութիւններու շատնալուն, ինչո՞ւ ամօթենք զայն. ո՞ր բանին մէջ անանկ չէ արդէն. կրթական, բարեկատարի հաստատութիւններու ինպաստ տրուած հանդէսներէն սկսած՝ մինչեւ սրճարաններու, գինետուններու մէջ երեւցած բաղմութիւնը, ժխորը, ուրիշներու կողմէ խօսուելու, ուրիշներէ երեւնալու պղտիկ փառասիրութեան հետեւանքը չէ՞:

Չկայ մէկը — ու այս պարագային շատ տափակ պիտի ըլլար կրկնել բացառութիւնները յարգելու հինցած բանաձեւը — որ քիչ ու շատ կերպով չունենայ ուրիշներէ խօսուելու, զովուհիւ, փառաբանուելու փափաքը, փափաք մը որ այնչա՛փ բնական է հիւմա, որչափ է՝ կեանքը ապրելու փափաքը ամէն շնչաւորի համար:

Պէտք չէ երբէք համեստութեան վերադրել մեր թերթերու մէջ յաճախ երեւցած սա բանաձեւը թէ՛ ծանօթ բարեսէր մը, որ չուզէր անունը յայտնել, կարիւր նուէրով մը սատարած է Աղգ. Հիւանդանոցին կամ Դալֆաեան

որքանոյն, ինչպէս կ'ըլլայ սովորաբար, որովհետեւ այդ ծանօթ բարեսէրը ուշ կամ կանուխ առիթը պիտի գտնէ ի՛ր իսկ բերնով յայտնելու՝ այդ ծանուցուած նուիրատուութեան հեղինակն ըլլալը, աւելցնելով մի եւնոյն ատեն թէ՛ չէր ուղած որ մարդ իմանայ:

Եւ սակայն քանի որ բնական է ըսինք երեւնալու փափաքը ամէն անհատի համար, պէտք չէ բնա՛ւ ամաթել շայն:

ԶԱՒԱՆ ՄՈՅՐԵԱՆ

ԿԷՍ ԳՈՑ ՆԱՄԱԿ

Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻՆ

Եթէ ոչ ձեր անձը՝ գէթ ստորագրութիւնն իր ծանօթ ըլլալով ինձ, կը բերուիմ սղօտիկ դիտողութիւն մը ընել Ձեր վերջին գրախօսականին՝ կամ լաւ է լսել քննադատականին մասին, զոր հրատարակութեան տուած էիք այն պարբերականին մէջ, որ թէեւ հասցէիս կուգայ՝ սակայն ժամանակ չեմ ունենար թղթատելու:

Ձեր այդ գրութիւնը, բացառիկ թիւերուն առթիւ էր եթէ չեմ սխալիր, որոնց պարունակութեան եւ կազմութեան վրայ խօսած ատեննիւ, չէիք յիշած Հանրալիսալը, որ իր նմաններուն մէջ է՛ն աչքառուն ըլլալը՝ ձեզ պէս գրասէրներ՝ կաշելի է ձենէ ա՛լ աւելի գրական ճաշակ ունեցողներ հաստատած են:

Ձեմ հաւատար թէ մեր բացառիկ թիւը ձեր ձեռքը հասած չըլլայ, որովհետեւ այն ատեն թերի դործ մը արտագրած կ'ըլլաք:

Ձեմ յուսար թէ թերթս թղթատելէ վերջ տնոր մասին բաներ մը գրած չըլլաք ձեր ձեռագրին մէջ, այն ատեն մասնաւոր թընամուծիւն մը սնուցած կ'ըլլաք անձիս դէմ:

Ձեմ յուսար թէ նախանձու օճը ձեր ներսիդին ալ ձգած ըլլայ իր զաղիր ձուլկները, այն ատեն, չահալիցի ստոր սիւը լուծած կ'ըլլաք:

Այլ կուզեմ հաւատալ թէ դուք անկողմնակալ ոգւով մը գրած էք պարտ ու պատշաճը, ու անդին ներմակ ու սեւին նախանձոտ հերոսը չի կրնալով մարտել այդ սողերը՝ զանց առած է, պարզապէս դողցած է զանոնք . . . : Խմորի խնդիր:

Այս անգամ նմոյշ մը կը դրկեմ Ձեր հասցէին, սպասելով որ ձեր կարծիքը յայտնէք տնոր մասին: Ձեր լուսթիւնը մութ ստուեր մը պիտի ձգէ ձեզ նկատմամբ մեր շինած գաղափարին վրայ, իսկ ձեր գրութիւնը երախապարտ պիտի թողու զմեզ:

Յարգանքով

Վ. Փ.

Մ Ա. Հ

Երկուսաբքի ժամը 4ին Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին կասարուեցաւ յուղարկաւորութիւնը:

ԲԱՐԹՈՂ ԷՖ. ՔԻՐՔՃԻՊԱՇԵԱՆԻ

ՀԱՅՐ

ԱԶՆ. ԳՐԻԳՈՐ ԷՖ. ՖԵՐԱՏԵԱՆԻ

Ուղարկուեցաւ Գեր. Տ. Հմայեակ Սրբազանի, իր շուրջը ունենալով չորս վարդապետներ, քահանաներ եւ դպիրներ:

Եկեղեցական արարողութենէն վերջ, Ուղարկուեցաւ Սրբազանը հակիրճ դամբանականով մը վեր առաւ հանգուցելոյն բարեմասնութիւնները, իբր գործօն անհաս, իսկաւ հայր եւ օրինակելի բնանիքի պէս:

Յաւարս եկեղեցական արարողութեանց դազադր առաջնորդուեցաւ շեղ մեռելականութիւն մը մէջ, ու ներկաները իրենց ցաւակցութիւնը յայտնելէ վերջ զաւկին՝ Ազն. Գրիգոր ԷՖ. Ֆերասեանի, մարմինը տարուեցաւ Շիրիի գերեզմանատունը:

Խմբագրութիւնս կը փութայ իր խորին ցաւակցութիւնը յայտնել Ազն. Գրիգոր ԷՖ. Ֆերասեանի, ինչպէս նաեւ Ֆերասեան գերդասանին եւ պարագաներուն:

ՔԻՉ ՄԸ ԺՊԻՏ

Սուրբ Սարգիսին ալ զօրաւոր, «Օլս մէյսս' Ինճուրնս Սոսայթի»ն:

Ներկայ քսաններորդ դարը իր մեծութենէն չատ պիտի կորսնցնէր, եթէ իր նախաքայլին մէջ գոնէ այսպիսի ապահովագրական ընկերութեան մը ծնունդ չի տար, ընկերութիւն մը որ մարդկութեան եթէ ոչ ամբողջին գոնէ կէսին ամենէն մեծ ծառայութիւնը պիտի մատուցանէ, տարակոյս չի կայ:

Եւ եթէ կ'ուզէք գիտնալ թէ ո՞րն է այդ կէսը, թող տուէք ինծի ըսել թէ մարդկութեան այդ կէսը երբեք գոյութիւն պիտի չունենար եթէ Ադամի քունը այդքան ծանր չլլար:

Նոյն ինքը չէ՞ պատճառը որ մենք դըժբաղդ եղանք անոնցմով և անոնք մեզմով:

Բայց նորէն անոնք բազմաւոր են՝ և կամ պիտի ըլլան, չնորհիւ վերոյիշեալ ընկերութեան:

Անշուշտ գիտէք, օրիորդներ, որ խել մը ընկերութիւններ կան որոնց քով մենք էրիկ մարդիկս, կ'ապահովագրենք մեր կեանքը, չոգենաւի մը մէջ ունեցած ապրանքնիս, մեր գրասենեակը, մեր ինչքը, կահկարասիքը, և մեր սունը:

«Օլտ մէյսս'» ընկերութիւնը այսուհետեւ պիտի ապահովագրէ ձեր տունը ... մնալը:

Ասիկա ձեր մտքէն չէր անցներ, իմինչս երբեք:

Այսուհետեւ ալ պէտք չպիտի ունենաք խնդրակատարներու առջեւ ծնրադրել, խըլալուզներու հետ ազէկ վարուիլ, Սուրբ Սարգիսին գլուխը ցաւցընել, և դիմաներկի գործարանները հարստացնել: Թէեւ այս միջոցներն ալ ամէն ատեն չեն յաջողիր:

«Օլտ մէյսս'» ընկերութիւնը հոն է, նետուեցէք անոր թեւերուն մէջ, ան պիտի փրկէ զձեզ:

Ամսական պզտիկ վճարումով մը չատ երջանիկ օրեր կրնաք վերապահել ձեզի:

Մինչեւ ձեր քառասներորդ տարին եթէ էրիկ մը գտաք, աղէկ. եթէ չի գտաք, թող անոնք ձեզ փնտռեն:

Ձեր ամսական պզտիկ վճարումները կաթիլ առ կաթիլ դրամոժիտ մը պիտի պատրաստեն ձեզի և անկից ետքը ձեզի պիտի մնայ ընտրութիւն մը ընել այն երիտասարդներու գումարտակին մէջէն որոնք իրարու ձեռքէ պիտի յափշտակեն ձեր ձեռքը և անոր մէջինը ... ձեր դրամոժիտը:

* * *

Օ՛հ, սա՛ մեր բարի գաւառացիները:

Անոնցմէ մէկուն հետ մի եւ նոյն ժամանակ խմբագրատուն մը կը մանեմ անցեալները:

Համակրելի գէմքով, վրան-վուխը մաքուր, երկայնահասակ մէկն է գաւառացիս:

Տարիքը, այն տիպարներէն մին՝ որոնք տարիք չունին: Երբ որ արդէն քսան և հինգ տարու է, քառասուննոց ալ կրնաս սեպել յիսուննոց ալ. երբեմն ալ քսան տարի կուտաս իրեն, և երբեք չես յաջողիր շիտակը գտնելու:

Ինչ և իցէ, երկուքս ալ խմբագիրներէն մէկուն գրասեղանին քովն ենք:

— Բան մը ունի՞ս, կը հարցնէ ինծի, և — Բա՞ն մը կ'ուզէք, — քովինիս:

— Կը հարցնե՞ս, կը պատասխանեմ ես:

— Այո՛, ծանուցում մը, կ'աւելցնէ քովինս:

— Հրամայեցէք:

— Ձեր լրագրին մէջ ծանուցում մը տալ կ'ուզեմ պաշտօն մը գտնելու համար:

— Շատ լաւ: Երեք անգամը քառունը զրուշ է:

Գրական լեցուն քսակ մը կը հանէ: Երբ մարդ ատանկ լեցուն քսակ մը ունի, կը զարմանամ թէ ի՞նչպէս կը համարձակի պաշտօն փնտռել: Խմբագիրը թղթի կտոր մը կ'առնէ և կը հարցնէ:

— Ի՞նչպէս պիտի գրուի:

— Ես ըսեմ դուք գրեցէք, կ'աղաչեմ:

— Լաւ:

— «Երիտասարդ մը, որուն պատուաւորութիւնը երաշխաւորեալ է, հաւաքիչի պաշտօն կը փնտռէ վաճառատան մը մէջ, տոմարակալութեան տեղեակ է և գիտէ հաշիւ, հայերէն, տաճկերէն, քիչ մը դաղդիներէն, կը ճանչնայ առեւտրական հրապարակը ...

— Ուրի՞շ, կը հարցնէ խմբագիրը:

— Աւելցուցէք որ «առմոնիք ալ զիտէ» :
Խմբագրին հետ քահ-քահ մըն է փրցու-
ցինք :

Պարտադէս հիանալի է այդ արմոնիքը :

Այո՛, խնդացինք : Բայց սալայն այդ
մարդը մեծ մարդ է :

Որովհետեւ իր արմոնիքը դիւտ մըն է
հաւաքիչի պաշտօնին համար :

Եթէ այդ ծանուցումը աւերիկեան թեր-
թի մը խմբագրին տուած ըլլար, ապահովա-
պէս անտեսագէտները Armonica Bill անու-
նով առաջարկ մը պիտի ընէին :

Այդ օրէնքը պիտի տրամադրէր որ ամէն
հաւաքիչ արմոնիք չալել գիտնայ, և այդ
երաժշտական գործիքին միջոցաւ իր հաշուե-
ցուցակին վճարումը խնդրէ պարտապահէն :

Տիւղերական վաճառականութեան զօրա-
ւոր միւլում մը պիտի տայ այս նոր գիւտը :
Կարծրահոգի պարտականները դուցէ ապա-
գային աւելի ազգուէին լաւ զարնուած ե-
ղանակէ մը քան թէ բրօթէսթօյլ մը սպառ-
նալիքէն :

Ամէն հաւաքիչներ պարտաւոր պիտի ըլ-
լային երեք եղանակ միայն գիտնալ և զար-
նել :

Գրասենեակէն ներս մտնելով հաշուեցու-
ցալը ներկայացուցած ատեն՝ d'une Vierge
Շորէնի մէկ կտորը :

Երբ վաճառականը ստակը համբելու վը-
րայ է, Ախալի « Marche triomphale » :

Իսկ երբ այս օր դնա՛, շաքթու գլուխ
եկու կ'ըսէ, Bethovenի Marche funèbre :

Ուրիշ տեղ չեմ գիտեր, բայց մեր շու-
կային հաւաքիչները եթէ մինակ այս վերջին
կտորը գիտնան, բաւական է, դարձեալ պաշ-
տօն կը դանեն :

* * *

Քիչ մըն ալ Պօլսեցիներէն :

Հարուստ, շատ հարուստ վաճառականի
մը սենեակը խեղճ մարդ մը կը ներկայանայ
կաղանչին օրը և իրաւցնէ թշուառ մարդու
մը ձայնով գլխովին կը հայցէ միւր աղնուա-
շուքէն :

Մէջ կը բերէ անօթի զաւակները, հիւանդ
կիներ, իր գործելու անկարողութիւնը :

— Վա՛խ, վա՛խ, կ'ըսէ վաճառականը :

Խրախուսուած այդ համակրանքի արտա-
յայտումէն, աւելի առաջ կ'երթայ ողորմելին
և անանկ բաներ կ'ըսէ իր մեծին որ ա՛լ չի
դիմանար և արտասուալից աչքով հեծկտա-
լով :

— Բաւական է, բաւական է. ատ ի՞նչ
խեղճութիւն է, ախպար. վա՛յ զավալը
մարդ, կը մրմռայ և զրասեղանին վրայի
զանդակը կը հնչեցնէ :

Քիչ մը եւս եւ խնդրարկուն թեւեր պի-
տի առնէր. այդքան գլխովին երբեք չէր
սպասեր :


Պաշտօնեայ մը կը մտնէ ներս :

— Գրիգոր, կ'ըսէ վաճառականը, սա է-
տէպսիզ հէրիֆին թեւէն բռնեցէք դուրս ը-
րէք, սիրտս կտոր կտոր կ'ընէ կոր :

Յ. ԱԼՓԻՍԵ

BONHEUR PERDU

PAR H. SINANIAN



Ստացանք ծանօթ երգահան Յ. Սինան-
եան էֆէնտիի 42րդ հեղինակութիւնը Bonheur
Perdu, Valse lente :

Յ. Սինանեան էֆէնտի, որուն ամբողջ
հեղինակութեանց շարքը՝ մին զմիւսը գե-
րազանցող ոգեւորութիւն, արուեստ ու ճա-
շակ ունին իրենց մէջ, այսօր կը փնտռուին
նոյն իսկ ամենէն դժուարահաճներու կողմէ :

Սոյն հեշտալուր ՎԱԼՍը կ'արժէ որ ամէն
դաշնակի սիրահար փափաքի ունենալ իրը
սալօնի մօտս, որ կը ծախուի բոլոր նուա-
զածուաց գործիներ ծախողներու մօտ :



ԲԵՐԱՅԻ ՕՐԻՓՐՈՒ ՄԸ ՕՐԱԳՈՐԸ

ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՌԹԻԻ

Սառեցնող ցուրտ մը և լալկան օդ մը կ'ընէր այն օրը՝ երբ գացի տեսնել Սիպիլը, մեր կին գրողներու քամէլիան, որուն հետ կ'ուզէի տեսակցիլ պահ մը, դասաւանդու թեան ինչ ինչ դժուար կէտերու վրայօք, այն ատենները երբ դեռ կը դասախօսէի Բերայի վարժարանը, որուն ներքին անճոռնի ու թիւնները չի տանելուս, չի մարսելուս համար ճամբուեցայ քիչ ատենուան մէջ:

Տիկին Ասատուր մինակը չէր սալօնին մէջ երբ ներս մտայ, իր ամուսնոյն՝ Հրանտ Էֆէնտիի մօտ նստած էր հիւր մը, որուն արտաքին երեւոյթէն յունական սքեմը ձգած ու աշխարհիկ կեանքը վայելել որոշած Տիաֆօս մը կարծեցի նախ: Պատկառելի ազնիւ անձնաւորութիւն մը, փառաւոր մօրուքով, լուրջ գէմքով, թափանցող աչքերով, երկայնահասակ խոհուն մէկը, որ անմիջապէս ներկայացուեցաւ ինձ տան տիրուհւոյն կողմէ, — Յ. Էֆէնտի ...:

Եւ առաջին անգամ ըլլալով տեսայ գըրագէտ մը՝ որուն լուրջ ոճը կը համապատասխանէր վարքի լրջութեան:

Ու երբ կարգը ինծի եկաւ, վարժուհի է ըսին տնեցիք, ու հիմա քաշուած մասնաւոր դասերով կ'ըլլալի ...:

Վարժուհի ... ինկած աղջիկ, վարժապետներու քմահաճոյքին խաղալիքը, թեթեւ պուպիկ մը, թաղականներու և կամ հոգաբարձուներու սպասուհին, պզտիկներու bonnet, ու մեծերուն սիրոյ փորձաքարը ...:

Ահա ինչ որ խորհրդածել տուին մեծ գըրագէտին, երբ վարժուհի է ըսին ինծի համար, և սակայն առանց փոքրիկ դժգոհանք մը, ջնջին ասելութիւն մը ցոյց տալու, շատ տաք վերաբերում մը ունեցաւ պատկառելի Յ. Էֆէնտիին՝ ինձ հանդէպ, ու քօղընին սկսաւ

տաք սալօնին մէջ, անշուշտ գրական և վարժապետական նիւթերու շուրջ:

Ամէն անգամ որ Յ. Էֆէնտին խօսք կ'առնէր անցած դարձած նիւթին վրայ, չեմ գիտեր ինչու աչքերս կը կախուէին բերնէն, ու լսել կ'ուզէի իր գաղափարներ, իր մեղմ ու յստակ արտասանութիւնը չեմ գիտեր ինչ մը ունէր իր մէջ, որ կամայ ակամայ համակրութիւնը կը շահէր ունկնդրողին:

Բաւական ատեն այսպէս լրջօրէն տեսակցելէ վերջ չեմ գիտեր ինչպէս եղաւ նիւթը բաւական մեծ ուսումնով մը դարձաւ ամուսնութեան վրայ ու նախորդ լուրջ գրագէտը մասնագէտի վարպետ քօղընիով մը խօսքը ինծի ուղղելով:

— Ամուսնանալու փափաք ունիք օրիորդ ... ըսաւ, պիտեւրուն տակ թեթեւ ժպտի մը յօրինելով:

— Ուրիշներ թերեւս պապակին ... բայց ես ատոր փափաքն ալ չունիմ ... ըսի հայու աղջկան թեթեւաբար խորհրդատուութիւն մը ցոյց տալու համար:

— Օ՛ ... ըսել է կարեւոր արգելք մը ունիք գձեղ կապող կապկպող, աւելցուց հեղնական ձեւով մը, կարծելով թէ իբր տղաք սեռին մէկ տկար ներկայացուցիչը չպիտի կրնայի պատասխանել:

— Կը սխալիք. գձեղ համոզելու համար թէ՛ ո եւ է արգելք չունիմ և կամ պատճառ, մէկ բառով ըսեմ թէ՛ ամուսնացեալ ընկերուհիներու աղի արցունքներն են զիս կաշկանդողները, ու այդ իրական դժբաղդութիւններն են որոնք կ'արգիլեն զիս երջանկութիւնս ապերջանկութեան փոխելու, լէ՛ մոնի ծաղիկներով և Տիկին խափուսիկ տխուր զոսով ...:

Յ. Էֆէնտին սկսաւ չորս դին նայիլ, յօնքերը վեր զարմացական դէմք մը չինեց ու

արագ արագ սկսաւ քաշել ձեռքի համրիչը,
առանց բառ մը արտասանելու:

Այսպէս խօսակցութիւնները իրարու յա-
ջորդելով վայրժենները կ'անցնէին, մերթ
վառարթ, մերթ լուրջ, մինչ մեծ դրազէսը
աչքէն չէր զատուր զիս, և այնքան՝ որ պահ
մը այնպէս կարծեցի թէ նոյն խոկ այդ վայր-
կենին, ձեռքս պիտի խնդրէր, չնորձաւորե-
լաւ իմ լուրջ և խոհուն համարձակութիւնս:

Անձրեւը չէր դադրեր սեղալէ, և իրիկ-
ուան ստուերը առկաւ կը թանձրանար:

Երբ կը պատրաստուէի մեկնիլ, Յ. էֆէնտին
ալ հրաժեշտ տուաւ, ու երկուքս մէկ սկը-
սանք իշնու աբաղքըմանին մարմար սան-
դուխներէն, առանց բառ մը արտասանելու:

Փողոցին դրան մօտ, ուրիշ պէտք էր որ
բաժնուէինք, դրազէսը չնորձալի ու քաղա-
քավար ձեւով մը կ'աղաւթէր որպէս զի հրա-
ժեշտ տայի իրեն:

— Մնաք բարեաւ Մրմրեան էֆէնտի,
ուրախ եմ ձեզ ներկայացուած ըլլալուս հա-
մար ...:

— Նոյնպէս ես Օրիորդ ... բայց ...

Կարծեցի թէ, պիտի ըսէր կամ պիտի ա-
ռաջարկէր որ միասին շարունակէինք ճամ-
բան, քիչ մը աւելի տեսակցած ըլլալու հա-
մար, բայց ինչ մեծ եղաւ զարմանքս երբ,
մօրուքին յարմար հայրական թօնով մը ա-
ւելցուց՝

— Եղբայրաբար պիտի ուզէի խրատել
ձեզ Օրիորդ, որպէս զի ուրիշ առթիւ նուազ
համարձակ դանուիք այնպիսի սաղօններու մէջ,
ուր անձանքներ կը գտնուին, մանաւանդ ...

Ու հովանոցին տակ սուրաց շտապաւ:

* * *

Մտածեցի, ժամերով, օրերով մտածեցի
և յանդիտաց առ մեծ ճշմարտութեան վրայ
թէ, մէկը, ով որ ալ ըլլայ, եթէ նոյն խոկ
ովկիանոսներու ջուրերուն չափ ալ կարգա-
յած դրած ու խորհած ըլլայ նորէն բան մը
կը պակսի իր մօտ ... Այդ մէկ բանը, այդ
մեծ պակասը՝

ԿԵՆՑԱՂԱԳԻՏՈՒԹԻՒՆՆ Է:

ՀԱԶԱ

ԴԺԲԱՂԴ ՍԻՐԱՀԱՐԸ

ԿԱՍԻՍԻՆ

Դեղագործ մը կար դիմել գեղեցիկ,
Անունն էր Անոն, շատ ալ մեծխօսիկ,
Ձեր հաւներ մեկուն, այլ միշտ անձին իր,
Կուսար ածական բոլորն ալ ընտիր:

Իսեալն էր այս պարոնին շատ շիֆ,
Աղջիկ մը գտնել, ըլլալ երջանիկ,
Թեեւ քիչ մը ուշ սակայն վերջապէս,
Ձեռք անցուց հաս մը աղուոր իրապէս:

Ու երբ որ առներ միշտ իր շաքական,
Կ'երբար կը գնէր աղջկան շատ բան,
Ու քաղք բարա նոյն իսկ չ'էր իսար,
Իր ծրնողին որ՝ այնչափ էր անկար:

Տունէն երբ իրմէ կ'ուզէին մանկիկ,
Կը մերժէր, կ'ըսէր. « վարպէս խաբէ գիս,
Շաքաք իրիկուն չի քաղ ինձ դրամ,
Որպէս զի բերեմ, ես ալ ձեզի քամ »:

Մայրը նարահաս օր մը վարպէսին
Երբայով կ'ըսէ յարգանքով խորին,
Թե ինչո՞ւ եղուն ճիշդ դրամ չի քաղ
Վարպէսը ապշած ... « ո՞վ ըսաւ չեմ քաղ »:

Վերջապէս մայրը հասկընալով քե,
Տղան վարպէսէն առածը կ'ուտէ
Առանց քաղ քաղա՝ իր տունին սալու,
Ձայն դուրս կը նետէ զերդ սմբած կասու:

Սիրած աղջիկն ալ երբ կը տեսնէ քե
Ձինք սիրով զղան անկուսիցեր է,
Թե երբ ինք դրամ կ'ուզէ ան չիսար,
Կ'սկըսի փնտռել զայն ձրգելու նար:

Այսպէս օր մը երբ դարձեալ միասին,
Կ'երբային տեղ մը խօսիլ առանձին,
Կոյսը ժպտադեմ՝ կ'ըսէ « ալ բաւ է
Որչափ խօսեցանք, զի գրպանդ ծակ է »:


Տղան աւելի յուսահաս ճիւղ,
Կ'երբայ, կ'աղաչէ, մօր ոտքը կ'իյնայ
« Ահ, մայրիկ, կ'ըսէ ներք՝ ինձ, գիտեմ,
Թե չափազանց մեծ յանցանք գործած եմ »:

Բերա

ՍԵՊՈՒՀ Մ. ԱԿՈՒՆԻ



ԱԶՆ. ՏԻԻՐԱՆ ՊԻՆԵՄԷՆԱՆ



ԱԶՆ. ԹՈՒԲԷՆ ԷԾ. ՊԻՆԵՄԷՆԱՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԶՔԵՂ ԵՐԵԿՈՅԹ

Ի ՊԱՏԻՒ

ԱՅՍ ԵՐԿՈՒ ՍԻՐՈՒԱԾ ԵՒ ԳՆԱՀԱՏՈՒԱԾ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐՈՒ

ԲԵՐԱ ԹԱՏՐՈՆ ՎԱՐԻԷԹԷ

1907 Փետրուար 19, ԵՐԿՈՒՇԱՔԹԻ գիշեր ժամը 3 1/2 Ժն

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՆԵՐԿԱՑԱՆԱԼԻ

ՏԻՒՐԱՆ-ՏԻՒՐԱՆ

Վաղիկ 3 արար

ԶԱԻԵՇՏ ՄԷԿ ԱՐԱՐ

Մնակեան խումբին առաջնակարգ եւ կարող արուեսագէտներէն՝ Տէր եւ Տիկին Պիննեմենեաններու ի պատիւ սարճուած ընտանեկան այս շէղ երեկոյքը, որուն կազմակերպութեան եւ յաջողութեան համար ոչինչ խնայուած է ամբողջ խումբին կողմանէ, նմանը երբեք չի տեսնուած ներկայացում մը ըլլալ կը խոստանայ՝ մասնակցութեամբ ամբողջ Տրամաքիք խումբին։ Բերացիք, ինչպէս նաեւ ուրիշ արուարձաններէ քաշեաւսէր հասարակութիւնը պէտք է առիք չի փախցնէ վայելելու այս անմահ եւ անօրինակելի ներկայացումը՝ նախ նորութիւն մը ըմբռնեալ ըլլալու, եւ աւելին՝ յարգած ու պատուած ըլլալու համար այսօր սարիներ ծափահարուած՝ Պիննեմենեան սիրուած արուեսագէտները։

Դիմերը սովորական

ԻԶՄԻՐԵՍԱՆ ԹՂԹԱՆՅՈՒԹԻՒՆ

4. ՆԱԻԱՍԱՐԴ

Բուն պաշտօնը դաստիարակող և ի մէջ այլոց — լրագրական այս banal բառով — խմբագիր, սրբագրիչ, թարգմանիչ, տիրացու, գրաշար և ... դերձակ: Կը զարմանաս թէ այդ իր պըտըտիկ մարմինին մէջ ի՞նչպէս կրցեր են սեղմիլ այդքան յատկութիւններ: Այսին մէջ սեղմուելիք մարդ մը, զոր ոչ ոք սակայն կրցած է ասիին մէջ դնել՝ բացի սիրելի բարեկամս Վահան Պալապանեանէն, նախկին անգամը Ուսումնական Խորհրդայ:

Իսկ գալով իր դիմաստուերին՝ կեցէք որ ըսեմ: Մնանկանալու մօտ եղող վաճառականի մը միշտ դժգոհ երեւոյթը, խորաթափանց ու չարածձի աչքեր կապոյտ ակնոցներու տակ, ու ակնարկը շարունակ վար՝ բան մը կորսնցնողի երեւոյթով, վրան տարին տասներկու ամիս երկայն բարտիւսիւ մը, և դանդաղ ու չափուած քալուածք մը: Եթէ հասակին նայիս՝ կարծես տղանքեթը նոր մտած է: Ահա սկուէթը սիրելի բարեկամս Պ. Կարապետին, և սիրելագոյն աջ ձեռքը — չէ՛ մոռցայ ձախը պիտի ըսէի. աջը Վարպետեանն է — Հրանտ Մամուրեանին, խմբագիր-սնօրէն Ա. Մամուր:

Հակառակ իր դժգոհ դէմքին՝ հեղահամբոյր է դիմութեան քոյրերուն պէս, գործունեայ ինչպէս մրջիւնները ...:

Բաւական տարիներ բուրգերու երկրին մէջ — ուր արմաւենիներ կը ծաղկին հող. Յ. Ալիխարի — համայնքին մանկալիքը կըրթելէ և իր սիրական (Ա. Մամուր)ին տեղական կեանքէն գեղեցիկ ու համով հոտով տպաւորութիւններ զրկելէ ետք, օրին մէկը յանկարծ մեր առջեւ դառնք զինք որ կը փութար իր խսիրը փռել Մամուրեանի խմբագրատան մէջ, իրեւ օգնական խմբագիր: Անկէ ետք հետզհետէ պաշտօնի կը կոչուէր. Հռիփսիմեան, Մեսրոպեան, Աւետիքեան վարժարաններուն մէջ, և վերջին անգամ ալ Քարաթաշի վարժարանը, ուր կը գտնուէի հիմակ, սնօրէն ուսուցչի պաշտօնով:

Ամէն իրիկուն վարժարանին արձակումէն

ետք Քարաթաշէն մինչեւ սոպարան կուգայ տապանակ ուխտի, թերթին այլ եւ այլ աշխատութիւնները կատարելու համար, ու ինք սոպարանին սեմէն դեռ ներս չի մտած, Հրանտը անմիջապէս կը պահէ իր սիկարայի հալիւրնոց տուփը, որովհետեւ սիրելի բարեկամս Նաւասարդ՝ հարկւրնոցի ոխերիմ թըշնամին է: Եթէ տուփէն հատ մը առնէ հողչէ, երբեմն կը նայիս որ երեք չորս հատը մէկանոյ կը զրպանէ: Այս առթիւ սիրելի ընթերցողներուս անձնական ղուարճալի մանրամաս մը:

Ասկէ քանի մը տարի առաջ, չաբաթ օր մը խմբագրատուն գացած էի Հրանտը տեսնելու, ու հաղիւ թէ քանի մը խօսք փոխանակած էինք, յանկարծ աղմուկ մը բրթաւ քովի սենեակէն, ուր իրենց չաբթուան յօդուածները կը գրեն Նաւասարդ ու Յ. Ալիփար: Պատճառը հասկնալու համար Հրանտին հետ անմիջապէս դուրս ելանք: Ի՞նչ տեսնենք:

Ալիփար բարկութենէն կաս կարմիր կըտրած՝ ձայնին բոլոր ուժովը կը պօռար.

— Աղբա՛ր, այս ի՞նչ խախկութիւն է, ի՞նչ աներեւան կան եղեր աշխարհիս մէջ, բաքէթիս մէջ հատ մը սիկարայ չէ ձգեր, ամէնը առեր է, մէյ մըն ալ հոս յօդուած գրողին Աստուած պէլան տայ, ես ասկէ ետք յօդուածներս մաղազան կը գրեմ, պակաս ըլլայ հոս նստիլը ...:

Ու առանց ժամանակ ձգելու որ խօսինք, գլխարկը դնելուն պէս Ալիփար մեկնեցաւ:

Այդ օրէն ի վեր այս պարագան պատճառեղած է որ համակրելի քրօնկագիրը իր յօդուածները տպարանին մէջ չի գրէ: Ալիփարին մեկնելէն վերջ, Նաւասարդէն հասկցանք եղելութիւնը: Ալիփար գրասեղանին վրայ մօռնալով իր հարկւրնոցի տուփը — որ սովոր էր միշտ վրան պահել Կարապետին ներկայութեան — վար իջեր է՝ մոռցած Բըքի Ժուռնալը վեր բերելու համար, ու Նաւասարդ առիթէն օգտուելով՝ ամբողջ տուփը պարպեր է, ձեռքի վարժութեամբ ...:

Նաւասարդի զրոյսկան արտադրութիւններուն մեծ մասը սխիզբէն ի վեր թարգմանութիւններ եղած են, զորս բաւական կոկիկ և մաքուր հայերէնի կը վերածէ յաճախ

Վարսամ ծածկանունին տակ: Ասկէ դատ ինք մեծ բաժին ունի «Ա. Մամուլ»ին հրատարակման մէջ, որու ընդ որ աշխատութիւնները գրեթէ ինք կը կատարէ, փոքրիկ բաժին մը միայն թողլով Հրանտին, այն ալ լրագրողի յաւիտենական չոր ու ցամաք բաժինը, և մէյ մըն ալ Նուրհան ստորագրուած «ձերմակ ու սեւ» խորագրով յօդուածները, յաճախ պոռտախօսութիւններ, անիմաստ, անխորհուրդ պատգամներ ու խորհուրդներ լեցուն, որոնց մէջ պայծառ կերպով ի յայտ կուգայ Մամուլեանի մտաւորական կարողութեան խղճալիութիւնը և աղքատութիւնը: Գալով Պ. Կարապետի ուսուցչական կարողութեան, անկեղծօրէն խօսելով՝ բաւական կարող ու փորձառու ուսուցիչ մըն է, և միանգամայն incorrigible գրարաւագէտ մը:

Սակայն մեղք որ իր կարողութիւնները չի քննադատուեցան նախորդ Ուսումնական խորհրդոյն կողմանէ, որոնք բռնի ուժով, և անհետ աղբօր օգնութեամբ դպրոցին դռնէն դուրս քաշընցին խղճ Նաւասարդը, կարծուելով թէ՛ ինքն է Ա. Մամուլի մէջ երկւցած այդ յօդուածներուն հեղինակը, որոնց մէջ կը քննադատուէր նոյն մարմնոյն պաշտօնաւարութիւնը և դպրոցներու խղճալի վիճակը:

Վայրկեան մը Նաւասարդին տեղ կը դընեմ ես զիս, ու կ'ըզամ թէ ինչ անհանդուրժելի հոգեկան վիճակ մը ունենալու է մարդըս, երբ այդքան տարիներ շունչ սպառելէ, աչքի լոյս թափելէ, միտք մաշկեցնելէ, տրքնելէ ու չարչարուելէ ետք, փոխանակ քեզի օրհնութեան կոնդակ մը զրկելու, կամ փոքր յորելեան մը սարքելու, անախորժ բռնորով վարժարանին դռնէն դուրս կը նետեն քեզի, անտես աղբօր հետ, որ երբեմն քեզի բարեւ կը բռնէր զիմացդ...: Դաշնամուրին համար կ'ըսեն թէ ապերախ գործիք մըն է, վարժապետութիւնը — այս վայելուչ բառով — աւելի ապերախ ասպարէզ մըն է ըստ իս:

Օրինակը թարմ, ցնցող ու նկատողութեան արժանի է: Ահա:

Իդմիրի մէջ Ստեփան Չաքրեան անուն վարժապետ մը ունինք, որ կէս դարէն աւելի պատկառելի ժամանակամիջոց մը անընդհատ կերպով աղգին վարժարաններուն

մէջ այնքան սերունդներ կրթելէ վերջ, իր ծերութեան պատճառաւ քաշուած էր ուսուցչական ասպարէզէն: Այնքան դժուարութիւններէ ետք, հանգստեան պղտիկ թռչակ մը յատկացուելով իրեն: Քանի մը ամիսներ կանոնաւոր վճարելէ ետք թոշակները, խեղճ Չաքրեանին սկսան «դրամ չկայ» ի յանկերքը: Շատ սուտուներ կը տեսնէի ալեւոր ուսուցիչը սրտի սեղմումով Առաջնորդարանի դրան մօտ, ցուրտին տակ դողդալով, ի խնդիր իր այդ փոքրիկ նպաստին, որ կը զլանային...:

Վերջին պահուն ստացած «Բիւզանդիոն» իս մէջ սրտի ճմուռով է որ կը կարգամ իր մահուն անուր լուրը, զոր փութացուցած պիտի ըլլար անչուշտ չքաւորութեան այդ տըխուր վիճակը...: Ինչ տխուր հեղուկութիւն կը մտածեմ, երբ կը կարգամ թէ՛ հեղ Չաքրեանը իր վերջին հանգստատեղին զրկելէ առաջ դամբանականներ ու ճառեր ալ կարդայեր են իր ցուրտ դադաղին վրայ, իր ուսուցչական գործունէութիւնը փառաբանող:

Եթէ յիսուն տարի այս յարատեւութեամբ եւ այս ուղղամտութեամբ փոխանակ կրթութեան ծառայելու, անհատի մը քով ծառայած ըլլար Ստեփան Չաքրեան, այսօր երեք չորս շէնք չինած կ'ըլլար Ֆրանկաց թաղը և կամ քարտիր: Համայնքին ծառայած ըլլալուն համար է որ այսօր այս տխուր վախճանը կ'ունենայ, ու երկու ծաղկեպսակ մէկ երկու դամբանակա՛ն ալ վրայէն ճառաւ...:

Այս պարագաներուն մէջ վարժապետ ըլալէ աւելի խելացութիւն է... պագալափի մը ըլլալը:

Սալիհի

Ս. Ե.

ԱՐԵՒԵԼԲ

Օրաթերթ Ազգային, գրական և քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դրշ. գաւառներու համար 108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Հասցէ՝ Դաւաթիա, Քամանտօ փողոց: ԱՐԵՒԵԼԲ հրապարակ կ'ըլլէ ամէն օր, կէս օրին, խնամաւ թղթանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ՍՕՐՄԱԿԻՐԻՆ ՍՈՒԱՌԷՆ

(Շար. եւ վերջ)

Պղտիկ աղաքը այնքան չէն թուրուար չօքօլային համար, որչափ մեծ պէպէքները սուառեին:

Սուառե կ'ըսեն և հոգի կուտան մանաւանդ անոնք՝ որոնք քիչ շատ համը առած են ստոր, ու շատ անգամներ գտնուած այդ եռուզեռ մթնոլորտին մէջ, ուր աչք և ոտք համահաւասար կը խաղան, լեզուները չեն դադարիր, սրտեր կը արտփեն, կ'ելեւէջին ու քոռսէներու տակ ալիքները կոհակներ կը ձեւանան, սրունքներ մէջէ մէջ կ'անցնին, ծանօթ և անծանօթ ձեռքեր իրարու մէջ կը սեղմուին, շարունակական պարերը կ'անակնուն շապիկները միսերնուն կը փակցնեն, հոտաւէտ թաշկինակները օդին մէջ կը թռչնեն, նոր պօթերը մարիկ մարիկ կը բերեն հազնոգները, մոռցուած ֆեռմ ժիւքերու բայցաւքներ ամօթի կարմիրը կ'անցնեն դէմքերու, սիրային թուրքիկ խօսքեր՝ բօլքայի մը կամ վալսի մը տաք թուրքերուն մէջ կը կրկնուին մոռցուելու համար, սասմոքաները կ'ուռնին ալազան և զարմանազան հիւրերէն, որոնք իրարու վրայ կուգան բազմի ներքին սալօններու խորը, զիրար չի ճանչցող երկուսն զոյգեր իրարու կը հաւնին, պղտիկ մը իրար կը սիրեն, ու դուրսը երբ իրար գան՝ մին հիւսիս կը նայի, մ'ւսը հաւաւ, et encore !

Ահա այս կարգի սուառե մը կը սարքուէր այդ իրիկունը Սօրմակիրենց տունը, որուն նախադուռը կամ նախնական պատրաստութեան վրայ դադափար մը տուինք մեր անցեալ շարթուան թիւով:

* * *

Ժամը երկուքն է:

Դուրսը սոսկում օդ մը կը արիւն, անձրեւը կը տեղայ անընդհատ, և սուր հով մը կարծես քակել քանդել կ'ուզէ ծառերն ու չէնքերը:

Սերովրիկ աղայենց տունը՝ թէեւ վարսագոյնները քաշուած, սակայն շատ մը կապուած ու մոմերու լոյսերը յայտ յանդիման ցոյց կուտային թէ՛ սուառեին տունը այդ էր:

Տիկին Սերովրիկ հայելին դէմ կապուած կարած ի դուր կը ջանար մազերը չլուկել, որովհետեւ երկու օր առաջ բաղնիք գացած էր — միայն կիները գիտեն այս պարագան թէ, բաղնիք գացողին մազերը չի բռնէր ... —

Օրիորդները զիրար կը շտկուէին շտապաւ, մինչ Սերովրիկ աղա նեղուցածի դէմք մը չինած վարի սալօնը կը պտտէր, յօնքերը վեր միշտ պէտքերը քաշելով. և ատեն ատեն վարադոյրին ետեւէն դուրս նայելով:

— Հա պապամ ֆուռթունա՛ ... աս հա վային ալ էկէր մարդ գալու ըլլայ նէ աչկ օչսուն ...

Վարը, միայն այդ գիշերուան համար յատկապէս բռնուած սպասուոր մը խոհանոցին անկիւնը թուքով կօշիկները կը փայլեցնէր ու ս'ը կրկնոցին թեւերով ալ ճիլա կուտար, ատեն ատեն սկսնջ դնելով փողոյին դրան զաւգակին:

Դեռ մանրամասնութեան չի մտած ըսենք թէ՛ ինչ հաղած էին Սօրմակիրի ներքը (հետեւողութեամբ Ծաղիկին):

Տիկին Սօրմակիր. — Սեւ սաթէն լիւքս չըջաղգեստ մը կիրիւռով, բասմանթոնիւրով, պօյալը մաշերուն մէջ մէկ քանի պաղա ֆուռքէթա, հին օրէնք ոսկի շղթայ մը վիզէն կախուած, մէկ երկու մասնի, զոյգ մը բապուճ օղեր և խոնջուած թեւերը կէս մը տէքօլթէ:

Օր. Սօրմակիր. — Մուսըլին ալ սուս չըջաղգեստ մը կիրիւռով, կուրծքին վրայ ալ կողմը սուս ծաղիկներէ պուքէ մը, մազերը վեր սօթթած, ձախ կողմը վարդագոյն ցեօ մը, ճիւղ ալապիտիկնէ բաց՝ տանթէլէ:

պէս մը, քէշի տէրիսի պոթեր, չորս կոճակները պակաս:

Օր. Սօրմակիր (օսթանճան). — Հալայի մովի քուէն ուր չին չըջողգուստ մը նոյնադոյն ժապուէններով, կուրծքը կէս համայնէ լսաց, սեւցած ոսկի շղթայի մը ծայրէն չորս քար բէրուղէլի մէտալեօն մը, ճաթուսած լուսաւորոն սկառքներ ու սեւ գուլպաներ, վրան՝ տունէն բանաւած ծաղիկներով, մաղերը վեր սօթթուած ու ժապուէնով շու մը չինուած թէփէն:

Օր. Սօրմակիր (պղտիկը). — Մուսըլին ուր էն վարդադոյն քօտախմ մը կիրիւռով, (ներեցէք բերանս վարժուեր է) տանթէնէրով ա լա սթօթա թեւերը սօթթած, ա լա լուացարարուէի մաղերը վեր առած և կոնակն ի վար ձգուած վարդադոյն ժապուէնով, մասնները կծկուած պոթեր, խոնձէն վեր պաշլամալը գուլպաներ, զիկ զիկ թեթեւութեամբ:

Ահա թուալէթը Սօրմակիրներուն, որոնք հիմա հագուած շքուած զսպանակի մը պէս ուշադիր ու լարուած, հիւրերուն կ'սպասէին:

* * *

Չերկարելու համար մեր նկարագրականը, ըսենք անյողակի թէ՛ ժամը չորսին մօտ արդէն բոլոր հրաւիրեալները, ազգականները, ծանօթները, բարեկամները նոյն խակ պարզ բարեւ Աստուբարին ընողները, անոնց դրացիները, թիւով ՎԱԹՍՈՒՆ հոգի, արու էգ լեցուած էին սենեակներուն մէջ, որոնք նեղ կուգային ու ալ սկսած էին երկու մտերմունքներ կէս կէս հակափոր նստիլ աթոռներու վրայ:

Շատեր մոռնալով պահ մը Սերովբիկ աղան բարեւել ու մեծարել, իրենց տանը պէս կը մօնէին ու կ'ընէին սիկառ ի բերան, ու մոխիրները վար թոթուելով, որոնց ի տես Սերովբիկ աղա կը ճաթէր, կը նեղուէր ու չէր կրնար ո՛ր և է դիտողութիւն ընել ի յարգանս պատշաճութեան:

Մինչ խրախճանութիւնը իրեն տաք փուլին հասած էր, ու ներկաներու՝ մասնաւանդ երկտասարդներու ոտքերը քէրկէֆ բանիլ սկսած էին տանսի սիրոյն, վարը դուռը կը դարնուէր:

— Պէտքաւար տունին թէմէնսիրը չաթը չութը կ'ընեն կոր ... տահա սօնը չեկա՞ւ, ըսելով, երբ Սերովբիկ աղա սանդուխին գլուխը կ'երթայ, զինք կը դիմաւորէն ընտանիք մը, այր կին, չորս աղջիկ, որոնց կըռնակէն բեռնակիր մը օրօրոց մը ներս կը մտցնէ ...

— Իշտէ պու ... քա կընիկ հոս եկուր, սա նայէ մէյ մը, պէշիկ կը բերեն կոր ...

— Սո՛ւս ճանըմ, չօճօխը տունը ձգելու չի՛ն ես, հետ են բերեր ...

— Քա ներսը կայնելու տեղ չիկայ, աս պէշիկը ո՛ւր պիտի դնէք ...

— Ներսի ետթախ օտասին ... հէմ ինծի նայէ ամօթ է, սուռաթղ շոկէ, նայէ քի կիւլէր երկը ըլա ...

— Քա իմ երեսս նայողը ո՛վ է քի, նէ անոնք իս կը ճանչնան կոր՝ նէ ալ ես, բաց ձգուած չէմէյի պէս կիւռիւ կիւռիւ կուգան կը թափին կոր ... տահա չեղաւ նէ պէշիկի չօճօխը խածին եկան, քիչ մըն ալ անցնի նէ ծոցուոր կընիկ մըն ալ պիտի բերեն տէ դահեկ պիտի վազցունենք ...

— Կեանին տակը կ'ամրիմ կոր, վրաս էօպէթ կ'ուգայ կոր ... ըսելով տան տիւկինը հիւրերուն մօտ կ'երթայ ու խնդում երես ընդունելութիւն մը կ'ընէ ամէնուն:

Նոյն պահուն խեղճ մարդամեքենան՝ Սերովբիկ աղա, հոս հոն նետուած սիկառները ժողուելով,

— Ծօ սա նայեցէք, ախր ուր պիլէ սիկառա չեն նետեր քի կրակ կ'ըլլայ տէյի ... զիֆթ խմելիքներ, աճապ ձեր տունէն ալ ասանկ կ'ընէք ...

Ու հաղիւ կը շարունակէր իր դիտողութիւնները՝ չիք երիտասարդ մը իրեն մօտեցնալով,

— Ինծի նայէ, բալթօներին գո՞ւն պահեցիր աճապ ... կ'ըսէ անտարբեր, Սերովբիկ աղային, զայն սանկ մէկը կարծելով, քանի որ չէր ճանչնար աւաջուց, և ուրիշ մը հետն ի վեր եկող միսաֆիրին միսաֆիրը ըլլալու պատիւը ունէր ...

— Հրամանքդ ո՛վ կըսուիս միւսիւ ...

— Պէ՛տ ֆօնսէ, օճիքիս երեսը աստուա կան ...

— Իմ գիտողս երեսդ պատուական չէ

Փռանալով քեօտէլէսի ըլլալու է քի, աստար տարուան Սերովբէին ելեր տէ ուշախի պէս բալթօ կը հարցունես կոր ...

— Ա՛ ... ներեցէք, դո՛ւք, այո՛ դուք, այն աղնիւ անձնաւորութիւն էք, որ այս երեկոյթը կը սարքէ ...

— Տէ դնայ բանըդ, իս հաւատքէ օրէնքէ մի հանէր ... ըսելով կը մեկնի երկտասարդին քովէն, ու շիտակ կ'երթայ իր կինը գտնելու:

— Քա հոս եկուր Գուլիկ, հաւնեցա՛ր ըրածիդ ...

— Ի՞նչ կըլու ճանրմ, ներս եկուր, ամէնքը քեզ կը փնտռեն կոր ...

— Ինծի փնտռողը գտաւ, հէ՛մ ալ բայը առաւ գնաց ...

— Վույ մըսեր, վախնամ պաղուծիւն մը ըրիր ...

— Ես ի՞նչ ընելու էի, զիւպպէին մէկը եկեր ինէ բալթօն կը հարցնէ կոր, կէօյա քի ես հոս ուշախ եմ ի պէս ...

— Քա ճանրմ, իշտէ ատանկ տէլ խանլընեղուն հետ չըսի՞ քի խօշ պիտի կէչինմիջ ըլլաւ տէյի ... մինք ինչո՛ւ աստար մառափները մտանք ...

— Ինծի նայէ, էկէր ատ հէրիֆները փեսայ պիտի ըլլան տէ, ինծի ալ ուշախի տեղ պիտի դնեն նէ, հիմա կաղերը մարելուս պէս ամէնը մէկ դուրս կը թափեմ հա՛ ...

— Աստուծմէ գտնաս քի, իլիկ վէրէմի պիտի ընես ինծի ... Կ'ըսէ ու կրկին կ'երթայ սննակ, ու խրախճանութիւնը էն տաք աստիճանին հասած էր, ու պարերը սկսած՝ դաշնակին տանկուլ տունկուլ զարնուածքովը:

Բոլոր երկտասարդները փետուրներու պէս կը դառնային մէկ մէկ տամա գրկած, ու տարեցիները իրենց կարգին միշտ դուրսի դըրան կը նայէին ի խնդիր պողազավէրու թեան ...

Միջոց մը Սերովբիկ աղա, որ երկու երեք ժամէ ի վեր նստած չունէր ու միշտ վեր վար կը պատկէր, ինչպէս կ'ըլլայ վերի յարկը հովուել կ'ուզէ, ու հազիւ սանդուխներէն վեր ելած, մութին մէջ երկու խոշոր աչքերու վառուտքը տեսնելով,

— Փի՛սթ ... շան դաւակ, քիմ պիւր

ի՛նչ կը խառնչտկես կոր ... ըսելով դէպի այդ պղպուռն աչքերը կը յառաջանայ:

...
Կատուի աչք կարծածը երկտասարդի մը ակնոցին ապակիներն էին, ու իր երկրորդ աղջկը Ադապին ճիշդ մօտիկը նստած:

Երկու սիրակցորդ դոյզերը այս անսակընդալ այցելուին հանդէպ, օրիորդը — բան մը որ իրենց սեռին յատուկ է — սրամոռութիւնը կ'ունենայ առանց ինքզինքը կորսնցնելու տքալ, ու մարմիրը,

— Ըն՛ ... ամա՛ն ... ամա՛ն ...

— Նասը՛լ, միւսիւ տօքթօն, աէրաէրին խապար խրիեմ տէ հաղորդութիւն մը տա՛նք...

— Բայց ներեցէք, օրիորդը սոսկալի խիթեր կ'զգայ ... և ...

— Էյ աղէկ մը մուայէնէ ըրի՛ր պարէ, միւսիւ տօքթօն, սանձի է մի եէլ է մի ...: Լուցիի մը վառելով հոն դրած մօմը ձեռք կ'առնէ:

— Ամա՛ն ... հայրի՛կ ... չարէ՛ս ...

— Ինծի կուգայ քի տօքթօնը չի կրցաւ չարէդ գտնալու, եախօտ, ևս վախտէն առաջ վրայ հասայ, հէ՛ ...

— Խնդրեմ, շնորհք ըրէք, օրիորդը արդէն ցաւերու մէջ է, մինչդեռ ...

— Հիմակ սիւքիւրիէ սափին քաշելուս պէս տիբ տիրի կ'ըլլայ ան, ֆախաթ քու վիզիթադ չիյտեմ քի բէնտէ ֆուս՛քով մը էօտէնմիջ կ'ըլլայ ... տէ վար կորսուեցէք նայիմ ... հիմա ալթ իւսթ կ'ընեմ հա, էտէպսիդ հէրիֆ, քեզի ո՞վ ըսաւ քի Սերովբէին տունը պալօզ է տէյի ... նամուս հըսըղարը ...

— Բայց պատիւ ... այո՛, ես ... որ ... դո՛ւք ...

— Թուքը ես պիտի փակցունեմ սուռաթիդ, զիւպպէ հէրիֆ, ծօ՛ քեզի ո՞վ տալէթ ըրաւ, ո՞վ ըսաւ քի Սերովբէին տունը հոգու հայ կայ տէյի ...

Տիկին Սօրմակիր, որուն աչքը իր ամուսնոյն վրայ էր միշտ, որպէս զի մի դուցէ պող բան մը ընէ, վերէն հասնող բարձր ձայներէն, շիտակ վեր կ'ելլայ, այն պահուն՝ երբ Սերովբիկ աղա, երկտասարդին ականջէն բռնած վար կ'առաջնորդէր:

— Վայ ծունը գլխուս ...

— Մի վախճար, իրաւ գլխիդ ձուն պիտի դար ամա, ես արեւի պէս վախտին ցաթեցի ...

— Քա՛, նէվրի՛կ, ի՞նչ է, ի՞նչ եղաւ ...

— Տիկին, յանուն մարդկութեան կը բողոքեմ, և յանուն պատիւիս բողոքողութեան կը պահանջեմ ... Կ'ըսէ միւսին, տիկինին վրայ հասնելէն սիրտ առած ...

— Անունս Սերովբէ է, պատիւս ալ տեղըն է, բողոքողութեան չեմ ... դուն հիմակ չիտակ պոչդ ժողովէ տէ տունէս դուրս ելիր, չէնէ ծուրիդ կը հանեմ սըտեղը ...

— Քա ճանըմ, կեցիր դործը հասկնանք մէյ մը, պէլքի տղան ... ու դեռ պիտի ուզէր պաշտպանել մայրը, երիտասարդը խօսք առնելով,

— Գիտնալու էք որ ես ինքս՝ Արամ Տիպուշեան զաւակն եմ այն բարեկեցիկ ընտանիքին՝ զոր կը ճանչնաք, և ...

— Ծօ որի՞ կ'ըսենք կոր քի դուրս ելիր տէյի ... որին աղան կ'ուզես նէ եղիր, քեզի ո՞վ ըսաւ քի Սերովբէն աղջիկները մէզալքը հաներ է տէյի ...

Մինչ այս մինչ այն սան տիկինը պէտք եղածին պէս համոզելով լոկոզելով խնդրը կը մարէ, ու բոլորը մէկ մարտի կատուններու պէս թափան իջիէն վար կ'իջնան:

Ներսը սալօնին մէջ սլարերը կը շարունակուին, ու գլուխներուն հետ սրտերն ալ կը տաքնան:

Ներսի սենեակներէն միոյն բազմոցին վրայ կ'ըկուած Սերովբիկ աղան, եղած անձուհիութիւններուն վրայ կը մտածէր, երբ տիկին մը ներս մտնելով իրեն կը մօտենայ,

— Աս ի՞նչ է Սերովբիկ աղա, մինակ ես մնացե՞ր ...

— Ծահլիւները էյլէնմիշ ըլլան թող, մենք ալ ասանկ կը նստինք սէյիւր կ'ընենք ...

— Աման դուն ալ Սերովբիկ աղա, ներսի որդըդ սատկեր է զահէր ... ըսելով քովը կը նստի, մարմինը մարմինին ...

— Է՛հ ... ասանկ եղանք, կ'ըսէ Սերովբիկ աղան, ինքզինքը քիչ մը անդին տանելով:

— Ա՛ս ի՞նչ է ... ինչէ հազ չե՞ս ըներ կոր ...

— Համմէ՞ ...

— Ես իսէ մինակ ես տէյի քովդ եկայ քի ...

— Տէր ողորմեա՛յ ... դարցուցիչ մոլորեցոյ ... ըսելով կ'սկսի աղօթք մը մուտալ ...

— Ան պունձուի աչուկներդ սիրեմ ես քուկին ... քանի վախիտ է ճիշէրս պիտի բռնամ քեզի ամա, կընիկէտ կը վախնամ կոր ...

— Հայտէ քուզում, հայտէ, Աստուծոյ տուածէն լեցուն միւշտէրի է ներսը, պէնի կէչ ...

— Ոտքդ պաղնեմ Սերովբիկ աղա, սըթմայի պէս կը դողամ կոր ...

— Տէր ողորմեա՛յ ... հալլէթ քէօւ շէյթան, ըսելով մարդը ոտքի կ'ելլայ ու դէմքը կը թթուեցնէ ...

— Ծօ պու նէ՞ իշ տիր ... քառասունոցները պիլէ աղմիշ ես եղեր տէ սալտըմիշ կ'ընեն կոր, ճահլիւները ի՞նչ խալթ ուտեն ... ըսելով դուրս կ'ելլայ սենեկէն, ուր կը հանդիպի իր մեծ աղջկան, որ երիտասարդի մը հետ քիթ քիթի կը տեսակցէր ...

— Հոգի՛ս ... այս չաթու կատարեալ պատասխան մը կուտամ ձեզի թէ՛ պիտի առնեմ թէ ոչ, բայց ամէն պարագայի մէջ կը յուսամ թէ պիտի ըլլայ ան դործը ...

— Տէրը խայիլ չըլլայ նէ թախրիւր ո՞վ պիտի տայ միւսիւ ... կը ձայնէ հայրը, յանկարծակի բերելով զիրենք, ու ալ կըծիկը կը դնեն:

— Հոս եկուր կընիկ, կ'ըսէ կնոջը մօտեցնալով, որ նոյն պահուն ինքզինքմէն ելած էր ի տես իր տատրակներուն, որոնք մէյ մէկ հաս պեճերած էին մէկ երկու ժամուան մէջ:

— Հիմա բայտօսը պիտի կոխեմ ... դէրէ աչքս շատ բան կը տեսնայ կոր կընիկ ...

— Մահման դողերու կուգամ կոր ...

— Ես ալ նստուս չալկեր գերեզման կ'իջնամ կոր, խապա՞ր ես, աս սուտէ չեղաւ Սալը-բաղաբին տառցաւ, բիւթիւն իրար կ'սունեն կուտան կոր ...

— Քա իշտէ սահա տղէ՛կ ես, թող սուր դործը քալէ, ինչո՞ւդ պէտք ...

— Քա կընիկ, լիւթմածի չրախի պէս աղջիկներս կը սխմեն կը սխմեն կը ձգեն կոր ...

— Ան կը նայիս քի մէկ հատը չէնէ մէկ հատին կը բախի ... ան չէ ես, սա լաճի-

վէրտ լաթերով աղան մենծիս ետեւէն շատ կը դառնայ կոր, նասըլ է ...

— Իշտէ ստ հէրիֆը երկուք մը տահա դառնայ նէ ինքզինքը սոխախին դուռը պիտի գտնայ ...

Ժամերը կ'անցնէին, ներկաները այլադան պարերէն յոգնած, առաւօտեան դէմ լիկած ու նետուած էին մէկ մէկ անկիւն, անշուշտ արու էդ քով քովի, ինչպէս կ'ըլլայ ըստ սովորականին և ըստ բնականին:

Սերովքիկ աղա կը մտնէր կ'եւնէր միշտ բերանաբաց յորնջելով, մինչ տիկինը իր երեք աղջիկները աչքէ չէր փախցնէր հասկընայու համար թէ՛ արդեօք եղած ծախքը իր նպատակին հասած էր, ուրիշ բառով, արդեօք կըցած էին մէկ մէկ հատ պէճէրուի:

Վերջին քատրիկէն ետք, որ շատ տաքօրէն կ'անցնի ընդհանրապէս, ներկաները մի առ մի կը մեկնին շնորհակալութիւն յայտնելով տան տէրերուն: Մէկ քանի դրացիներ կէս ժամ եւս նստելով, անոնք ալ կը բաժնուին տաք սալօնէն, ու երբ ոչ ոք կը մընայ տանը մէջ, Սերովքիկ աղա անգամ մը աչքէ անցնել կ'ուզէ սննեակները, վերը վարը:

Վերի յարկը պղտիկ խցիկէ մը խօսակցութեան ձայն մը կ'առնէ ու դրանը մօտ կ'սկսի մտիկ ընել:

— Եսողմա չիկայ ... ան խոռոզ մազլըն տիւզճէ ինծի հասկցուց դործը, հիշ չէնէ չորս հինգ անգամ անխաթէ ըրաւ ...

— Հա ամա, իմինս տահա չիք էր, հէմ ինծի ըսաւ քի, նամակ պիտի գրեմ տէյի...

— Էյ մէկ առա մը խելքիս պիտի գտր, ան լէվանտալը գլոխը սանկ վրաս չի դրաւ տէ խաղացիւր էր ... Էյ լինցա՛յ, լինցա՛յ...

— Սուս եղիր մարդու լան մըսեր ամա, ան լաճիվէրտ քօսախիւմին երկու անգամ պիչիմին ձգեց ձեռքս պաղաւ ...

— Էյ անէքի դուն ըսիր նէ պարէ ես ալ ըսեմ, իմինս ալ երեսս պաղաւ, հէմ ալ պաղած ատենը զիտես քի թէփէս ի վար պաղ պաղ խովա մը ջուր թափեցին ...

— Էյ քեզի երբ պիտի գրէ նամակը ...

— Չիտեմ ամա, իմինս ըսաւ քի, աս իրնկուն ուշ վախիթ բէնճիրէն ըլլամ տէյի, պատածին ծարովը հէտիյէ մը պիտի բերէ ...

Երկու քայրերուն այս տաք և սրտոտ խօսակցութիւնը լսող խեղճ Սերովքիկ աղան, երբ դեռ կուզէր լսել շարունակութիւնը խօսակցութեան, կինը վրայ կը հասնի:

— Ի՞նչ է ան, տահա չի լինցա՛ւ ուրուր ուրուր պտըակելդ ...

— Աչքդ լուս, փարաներնիս պօշը չի դնաց ...

— Վայ մըսեր, աճապ խերով խապա՛ր մը կայ ...

— Մերիններուն բէյէրը տուեր են, աս իրնկուն ալ վրայի թառաֆը պիտի բերեն եղեր ...

— Պարէ շնորհքով լօխմաներ են եղեր...

— Հաւկիթները պայաթ ըլլալուն խաս լօխմա չեն կըցեր թափելու, չաբաթ մը ետքը սուռառէ մը տահա տանք նէ խաս լօխման ան ատենը պիտի կլլեցունեն մեզի ...: Ես աս տարիքս եկեր եմ, տահա աղջիկներուս բերնէն, պաղին, սխմեցին ֆիլան լսած չունէի, փառք Աստուծոյ, ատոնք ալ տեսանք լսեցինք, Աստուած հոգիս առներ տէ, աստարով խողը մանայի ...

— Ը՛նչ, ասանկ բաներէն մարդ խողը չի մտնար ...

— Քէշկէ մարդը մտնայ տէ նամուսը չի մտնայ ...:

ԼԽԼԱ

BAL PARÉ

Զմրան ներկայ եղանակին՝ ուր երեկոյթներ, պարահանդէսներ իրարու կը յաջորդեն Բերայի մէջ, թերեւս գտնուին լուրջ դքսասէրներ, որոնք թէեւ կը փափաքին վառիւր այդ կարգի դքսապի երեկոյթներ, սակայն իրենց ճաշակին, դիրքին վայելուչ կողմակերպութիւն մը ունեցող պարահանդէսի մը մէջ ցարդ չի դառնուելու համար զրկուած ըլլան:

Այս անգամ ծանօթ պարի դասատու

Խ. ԽԱՉԱՏՈՒԲԵԱՆ ԷԾ.

կուգայ այդ սպասուած պակասը լեցնել և գոհացում տալ Հայ-Լայֆ դասակարգին, կազմակերպելով չքեղ պարահանդէս մը անդիմակ, Մարտ 10 (Ը. Ե.) Բերա: Մանրամասնութիւնք յաջորդիւ:



ՍԿԻՒՏԱՐ. — Ամէն բան արու էր ստեղծուած է կ'ըսեն. Այս անգամ Սամաթիոյ աշկերտ ծեծող վարժապետին տիշին հոս երեւան ելաւ : (Պշտիկներու վրայ բազում փորձող վարժուհին անշուշտ վերջ ի վերջոյ մեծերու վրայ ալ փորձեր պիտի կատարէ. Ծ. Խ.) :

ՆՈՅՆ. — Սմաթիկագիր միւսիւ մը անցեալ շաբթու պարահանդէսի մը մէջ տամա մը խածած երբ մահալլէպիճիին կը տանէր, տամային եղբայրը վրայ հասնելով քաղաք կոփսիւին տեղ շառաչիւն ապտակ մը կերցուցեր է իրեն . . . : (Թիւլպէնտը քացախը թաթխէ վրան զարկ, հուրքը կ'առնէ. Ծ. Խ.) :

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Վաճառականի մը զրագրին, Եալովացի սպասուհիի մը հետ ամուսնանալու գաղափարը երթալով իրական դոյն մը առնելու վերայ է : (Այս հաշուով ամսական վեց մէծիտը դրպանը պիտի մնայ. Ծ. Խ.) :

ԻՉՄԻՏ. Սեդրակայ, Միսաքայ և Յաբելմնագովի տօնին առթիւ 140,000 պարոն մը երրորդ անգամ ըլլալով նշանտուքը վերանորոգեց, կաթնավաճառ և թուռչուծի օրիորդի մը հետ : (Bon appetit. Ծ. Խ.) :

ՊԻԼԵՃԻԿ. — Վերի գրուածքը կը հաստատենք :

ԻՉՄԻՐ. — Հանրադիտակը հոս այնքան ձեռքէ ձեռք, տունէ տուն կը մեծարուի որ, տեղացի կը թասէր անձեր որոշած են չիք սեքես մը պատրաստել, որպէս զի չի վնասուի : (Հանրագիտակը որչափ ձեռքէ ձեռք անց-

նի՝ այնքան կը փայլի ու կը փալկի աչք կուրցնելու աստիճան. Ծ. Խ.) :

ԲԵՐԱ. — Ուրախութեամբ կարգացինք, Խաչատուրեան էֆէնտիի պարահանդէսին բռնկումին մէջ Ս. Բաբէլեանի Համրագիտակ քոյքան, զոր պիտի ածեն . . . էն չիք դրախտահաւերը :

ԲԱՆԿԱԼԹԻ. — Ֆինո շնիկներ պահելը մօտայի կարգ անցած է հոս : Անցեալ օր շնիկի մը համար կ'ըսուի թէ՛ օրիորդ մը մաման ծեծեր է :

ՄՏՔԻ ԶԲՕՍԱՆՔ

ՊԱՐԳԵՒԱԽՈՐ

ԼՈՒԾՈՒՄ

Ա.

— Գէր a, պատիւ մակդի'ր

Գ.

— ին

Ն.

— մէկ նու

Թ.

— թ

Ի.

— իւնը

Է.

— բարձր է

Այսինքն՝

« Գեղապատի » մակդիրին մեկնութիւնը բարձր է :

Զորս քսան եւ եօթը լուծողներուն մէջէն Տիար Արսէն Միանեան կ'ստանայ խօստացուած թղթապանակը :

Ursofmskr ԱՐՄԷՆ ԼՈՒԾՈՒՄ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐՅԱՆ

Պապր-Ալի հասէսի քիւ 52.

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՐԱՆԳ, ԿԱՆԱՆԳ ԵՆ ՏՊԱՅՈՂ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՆ ԸՆԿ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ տոկունութեամբ և գիներու անմրցելի աժանութեամբը չհաճ է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հազուստներու, կանանց բեղուններու և տղայոց չիք և գիմացկուն փոքրիկներու ճոխ միտերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հազուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ է:

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 50—23



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍՍԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղաչ պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը, որք ուղղակի ներածուելով Սեյանէ, Զինասանէ, Հեղիասանէ, Ճալաէ և Ճալունէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըրնան գոհանալ թէյերու թարմութեամբ հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յատուկ խառնուրդները, որք կը ծախուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մտաւորին:

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրգանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիռիկլէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա. Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՏ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել քաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-12

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։